

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
9	<p>Սվիտեր՝ ուսադիրներով և տարբերանշաններով (Ս2) Սվիտերի գործվածքի մակերեսային խտությունը պետք է կազմի 550-650 գ/մ2: Բաղադրությունը՝ բուրդ 30%, ալրիլ 70%: Գույնը՝ ըստ ներկայացված նմուշի կանաչ գունավորմամբ, ուսագոտին և արմնկի պաշտպանիչ օվալները ՀՀ ԱԱԾ Ս2 գունաքողարկող կտորով: Գործվածքը խիտ, չընթարծակվող (չլոճվող)՝ առաջնային վացում անցած: Առաջամասի, հետնամասի և թևքերի գործվածքը ներքևից սկսվում է 6.9-7.1 սմ լայնության 1x1 տիպի կրկնակի մանժետով, որի առաջին շարքը ներգործվում է սպանդեքս տեսակի Էլաստիկ թելով: Կզամասը՝ կլորավուն, մշակված 3.0 սմ լայնության մանժետով: Ուսամասերում և արմնկամասերում վրակարված են առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ սահմանապահ գորքերի քողարկող կտորով օվալաձև արմնկակալներ և ուսագոտով ուսակալներ: Կրծքամասի ձախ կողմում մշակվում է նույնպես առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ համապատասխան գունաքողարկված գործվածքից վրադիր կափույրով գրպան, որը կոճկվում է 14-15մմ տրամագծով մետաղական կոճգամով: Ուսերին վրակարված են կոճգամներով ամրացվող ուսադիրի սեպածև կտրվածքով ախլակներ, որոնց վրա հագցված են առնվազն 200 գ/մ2 մակերեսային խտությամբ, 5.1սմ*10սմ չափսի նույն քողարկող կտորով, ասեղնագործ կոչումներով ուսադիրներ: Սվիտերի ձախ թևի ուսագլխից 90մմ ներքև ասեղնագործվում է ՀՀ ԱԱԾ տարբերանշանով կլոր թևքանշանը՝ վերևում հովհարածև գրվածքով, աջ թևին ուսագլխից 90մմ ներքև ասեղնագործվում է ՀՀ ԱԱԾ Ս2 տարբերանշանով կլոր թևքանշանը՝ վերևում հովհարածև գրվածքով, (ըստ նմուշի): Փաթեթավորումն ու պիտակավորումը: Սվիտերի ներսամասից փակցվում է 3.5սմ*5սմ պիտակ, որի վրա պետք է նշված լինի արտադրող</p>

կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, ծոծորակի հատվածում՝ չափսը: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 3%: Սվիտերի արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Չափս հասակային (42/2 - 64/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ XS - 4XL) և կոչումային (սերժանտականից - գեներալ-մայոր) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԳԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
9	